ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի՝ Կատարի Պետություն (Դոհա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 19-ը, Կատարի Պետություն (Դոհա):

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) մասնակից պետությունների համաժողովի (UNCAC CoSP) 11-րդ նստաշրջանին (այսուհետ նաև՝ Համաժողով):

Քննարկված թեմաները՝ Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի (IRM) հաջորդ փուլ, Դոհայի հռչակագիր, Համաժողովին ընդառաջ մասնակից պետությունների կողմից ներկայացված մի շարք բանաձևերի ընդունում և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի 11-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով 2025 թվականի դեկտեմբերի 15-ից 19-ը գտնվել է Կատարի Պետությունում (Դոհա):

Համաժողովի ընթացքում քննարկվել են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի (IRM) հաջորդ փուլը, Դոհայի հռչակագրի և Համաժողովին ընդառաջ մասնակից պետությունների կողմից ներկայացված մի շարք բանաձևերի ընդունմանն առնչվող հարցերը: Քննարկվել են նաև ակտիվների վերականգնման, միջազգային համագործակցության, կոռուպցիայի կանխարգելման և տեխնիկական աջակցության վերաբերյալ թեմաներ:

Համաժողովը մեկնարկել է պաշտոնական բացման արարողությամբ, որի ընթացքում ազգային ելույթով հանդես է եկել նաև Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը: Արդարադատության նախարարը Համաժողովի մասնակիցներին ներկայացրել է Կոնվենցիայի շրջանակում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված

հակակոռուպցիոն ոլորտի մեծածավալ բարեփոխումները՝ անդրադառնալով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդմանը, բարեվարքության ստուգման մեխանիզմների շարունակական կատարելագործմանը, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացներում ներառականության ապահովման գործող մեխանիզմներին: Իր խոսքում Սրբուհի Գալյանն ընդգծել է Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի՝ Հայաստանի Հանրապետության վերանայման երկրորդ շրջափուլի ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդնումը և վերահաստատել ՀՀ հանձնառությունը՝ շարունակելու գործունեությունը Կոնվենցիայի դրույթներին համահունչ:

Դոհայում գտնվելու ընթացքում Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության Արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմիի և Ֆրանսիական հակակոռուպցիոն գործակալության ղեկավար Իզաբել Ժեգուզոյի հետ:

Այս համատեքստում, Սրբուհի Գալյանը և Իրանի Իսլամական Հանրապետության Արդարադատության նախարար Ամին Հոսեյն Ռահիմին քննարկել են Կոնվենցիայի IV գլխով նախատեսված միջազգային համագործակցության շրջանակում երկու պետությունների միջև հետագա համագործակցության կետերը:

Սրբուհի Գալյանի և Ֆրանսիական հակակոռուպցիոն գործակալության ղեկավար Իզաբել Ժեգուզոյի միջև կայացած հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ ազդարարման համակարգի կատարելագործման նպատակով Ֆրանսիական հակակոռուպցիոն գործակալության համապատասխան փորձի ուսումնասիրությանը, ինչպես նաև հանրության շրջանում կոռուպցիայի ընկալման պատշաճ մակարդակ ապահովելու համար Ֆրանսիայի իրավասու մարմնի գործունեությանն առնչվող հարցեր:

Արդարադատության նախարար

Սրբուհի Գալյան

24.12.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ արդարադատության նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1115-Ա որոշման**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը **ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը** *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*
4. Գործուղման վայրը **Կատարի Պետություն (Դոհա)**
5. Գործուղման ժամկետները **2025 թվականի դեկտեմբերի 15-19-ը**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ** *(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Սրբուհի Գալյան**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	292,610	292,6
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	178 ԱՄՆ-ի դոլար	0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	67,916	0
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը	271,664	271,7

	(դրամ)	(4*178$=712$*381,20դրամ= 271,414դրամ, որի 60%=162,849դրամ (4*178$=712$*381,55դրամ= =271,664դրամ Տարբերությունը 108,815	
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	123 ԱՄՆ-ի դոլար	0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	46,958	0
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	234,438	234,4
Այլ ծախսեր	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում)*	0	0
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		798,712	798,7

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ